Հաստատում եմ
Տնօրեն՝ ______ Ա. Գասպարյան
___.________2021թ.

Հաստատում եմ
ՄԿԱԳ տեղակալ՝ ______ Ե.Քոլյան

Ուսումնական հաստատության դասարանի ղեկավարի աշխատանքային տարեկան ծրագիր

Կոտայքի մարզ
«Աբովյանի կրթահամալիր» ՊՈԱԿ
2021-2022 ուստարի
III գ դասարան
Դասվար՝ Ն. Սեյրանյան

Դասղեկի աշխատանքի փուլային նկարագրություն

Ուսումնական տարվա սկզբին

1.Կազմել աշակերտների անվանացանկը և լրացնել դասամատյանը, էլ.մատյանը /2021-2022ուստարվա առաջին շաբաթվա ընթացքում/

2.Վերստուգել կամ պատրաստել դասարանի սոցիալական անձնագիրը

3.Սպառիչ տեղեկություններ հավաքել դասարանի աշակերտների՝ լրացուցիչ կրթության հաստատություններում մասնակցության մասին

4.Կազմել դասարանի դաստիարակչական աշխատանքի պլանը

Ամենօրյա աշխատանք

1.Դասամատյանում նշել բացակայությունները

2.Հետևել կարգապահությանը

3.Հետևել հերթապահությանը դասարանում

Ամենշաբաթյա աշխատանք

1.Ստուգել աշակերտների օրագրերը

2.Վերահսկել դասամատյանի վարումն այլ ուսուցիչների կողմից

3.Անցկացնել դասղեկական ժամեր

4.Կատարել այլ պլանավորված աշխատանքներ

Ամենամսյա աշխատանքներ

1.Նախապատրաստել և կազմակերպել աշակերտների մասնակցությունը դպրոցական գործընթացներին

2.Վերահսկել դասարանի աշակերտների մասնակցությունը խմբակներում

3.Օգտվել հոգեբանական ախտորոշիչ թեստերից, հարցաշարերից, ախտորոշման այլ միջոցներից, դրանք նրբանկատորեն կիրառել դաստիարակչական աշխատանքում:

Կրթադաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1.Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում:

1.1 Սովորողների առողջության, կենսունակության պահպանում,

1.2 Սովորողների ուսումնական գործընթացի կազմակերպում,

1.3 Արտադասարանական գործունեության կազմակերպում,

1.4 Համագործակցություն աշակերտների ընտանիքների հետ,

1.5 Համագործակցություն պարապող այլ ուսուցիչների հետ,

1.6 Համագործակցություն հոգեբանի հետ,

1.7 Խորհուրդներ ծնողներին,

1.8 Ծնողական հանդիպումներ և ժողովներ:

2.Հայեցի դաստիարակություն

2.1 **Հոգևոր դաստիարակություն:** Զնավորել.

ա) հարգանք երկրի, եկեղեցու, հասարակության և ծնողի նկատմամբ,

բ) ազգային հպարտություն և հայրենասիրություն,

գ) հարգանք սահմանադրության, պետական իշխանության, լեզվի, ՀՀ խորհրդանիշների նկատմամբ:

2.2 **Գեղագիտական դաստիարակություն:** Զնավորել և դաստիարակել սովորողների գեղագիտական ընկալումներն ու ըմբռնումները, գեղագիտական դատողություններն ու մտածողությունը, գեղագիտական պատկերացումները, գեղագիտական զգացմունքներն ու գնահատումները, գեղագիտական ճաշակը, ինքնադաստիարակությունը և այլն:

2.3 **Ռազմահայրենասիրական դաստիարակություն:** Զնավորել երեխաների ռազմահայրենասիրական զգացմունքները: Երեխաների մեջ սերմանել հոգատար վերաբերմունք հայրենիքի պատմության, մշակույթի, հայրենիքում ապրող հարազատ ժողովրդի, ազգի ավանդույթների, սովորույթների նկատմամբ: Դաստիարակել հայրենիքը պաշտպանելու պատրաստակամություն, որին կնպաստի մեր մեծ հերոսների կերպարների օրինակները:

2.4 **Ֆիզիկական դաստիարակություն:** Ամրապնդել աշակերտների ֆիզիկական զարգացումն ու առողջությունը, զարգացնել շարժողական կարողություններն ու հմտությունները, դաստիարակել ֆիզիկական կուլտուրայի հանդեպ կայուն հետաքրքրություններ ու պահանջմունքներ:

2.5 **Աշխատանքային դաստիարակություն:** Յուրաքանչյուր երեխայի մեջ սեր ներարկել դեպի աշխատանքը, աշխատող, աշխատանքը գնահատող մարդը: Հասնել այն բանին, որ աշակերտի աշխատասիրությունը վերածվի ամենօրյա սովորույթի, դառնա բնավորության գիծ: Աշակերտին ընտելացնել աշխատանքային և գիտակցական կարգապահությանը և այդ միջոցով նրանց մեջ մշակել բարոյական բարձր որակներ:

2.6 Բնապահպանական դաստիարակություն: Առաջին հերթին երեխաներին գինել բնության և հասարակության կապի, բնության գոյության անհրաժեշտության, բնության հավասարակշռության պահպանության, էկոլոգիական արժեքների, բնությանը վերաբերվելու նորմերի, բնությունից օգտվելու և այն պահպանելու գիտելիքներով:

3. Դպրոց-ընտանիք կապը: Երեխայի զարգացման և ձևավորման գործում անչափ կարևոր է ընտանիքի դերը: Ե՛վ դպրոցի, և՛ ծնողի ողջ ջանքերը պետք է ուղղված լինեն միևնույն նպատակին՝ համակողմանի զարգացած և դաստիարակված անձ ձևավորելուն: Այդ իսկ պատճառով դպրոց-ընտանիք կապը պետք է շատ սերտ լինի: Արդյունքը նկատելի կլինի միայն միասին և փոխհամաձայնեցված, իրար լրացնող աշխատանքի դեպքում:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը	Նպատակը	Ուսումնական շաբաթը
Կազմակերպչական աշխատանքներ	Կորոնավիրուսային հիվանդության պայմաններում հանրակրթական ուսումնական հաստատություններում գործունեության կազմակերպման ուղեցույցի մի շարք կանոնների: Դասարանի ակտիվի ձևավորում:	1-ին շաբաթ
Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում	Մշակել կանոններ դպրոցում իրենց իրավունքների և պարտականությունների մասին:	2-րդ շաբաթ
ՀՀ անկախության օրը	Իմանալ հայրենիքի պատմության հիշարժան պահերը:	3-րդ շաբաթ
Պետական խորհրդանիշներ	Կարևորել պետությունների անկախությունը և պետական խորհրդանիշները:	4-րդ շաբաթ
Քո առողջությունը. անձնական հիգիենա, օրվա ռեժիմ	Բացատրել հիգիենայի և առողջության սերտ կապը: Սովորեցնել ճշգրիտ օգտվել օրվա	5-րդ շաբաթ

	ռեժիմից:	
Առողջ ապրելակերպ	Կարևորել սպորտի դերը երեխայի կյանքում:	6-րդ շաբաթ
«Իմ հույզերն ու զգացմունքները»	Ճանաչել սեփական հույզերն ու զգացմունքները:	7-րդ շաբաթ
«Ես էլ քեզ նման եմ» Հանդուրժող վարքի սկզբունքները	Զևավորել հարգանք դիմացինի նկատմամբ: Վերհանել հանդուրժող մարդուն բնորոշ առանձնահատկությունները: Զևավորել հանդուրժող վերաբերմունք:	8-րդ շաբաթ
«Քանի լեզու գիտես, այնքան մարդ ես»	Զևավորել բազմակարծություն և աշխարհայացք	9-րդ շաբաթ
«Պետք է արդյոք խնայել»	Զևավորել բնության և բնական պաշարների հանդեպ խնայող վերաբերմունք(թղթի խնայողություն)	10-րդ շաբաթ
Քաղաքացիական ինքնություն	Ինչպիսի որակներ պիտի ունենա քաղաքացին, քաղաքացի լինելն ինչքանով է առնչվում իրենց:	11-րդ շաբաթ
«Ամանորին ընդառաջ»	Գեղագիտական ճաշակի, գեղեցիկի ընկալման և ստեղծման կարողությունների ձևավորում	12-րդ շաբաթ
«Ի՞նչ ձեռքբերումներ ունեցա այս կիսամյակի ընթացում»	Ժամանակի և ձեռքբերումների գնահատում և իմաստավորում: Մտորել բացթողումների և ձեռքբերումների շուրջ:	13-րդ շաբաթ
«Ինչպե՞ս պատրաստվել երկրորդ կիսամյակին»	Վերլուծելու կարողությունների ձևավորում	14-րդ շաբաթ
«Ես սիրում եմ իմ զինվորին»	Զգացմունքները արտահայտելու, հարգալից և նվիրական վերաբերմունքի ձևավորում	15-րդ շաբաթ
«Ջուրը կյանք է»	Գիտելիքներ ջրի կարևորության մասին	16-րդ շաբաթ
Ճանապարհային երթևեկություն	Ճանապարհային երթևեկության կանոնների իմացություն	17-րդ շաբաթ
Հովհ. Թումանյանի հեքիաթները	Վերլուծել հեքիաթները	17-րդ շաբաթ
Զրույց «Մայրենիի օրը: Ինչպե՞ս սովորել գեղեցիկ խոսել»	Կարևորել մայրենի լեզվի իմացությունը, գեղեցիկ խոսք ունենալու կարողությունը:	18-րդ շաբաթ
«Գարունն իմ հայրենիքում»	Գարնանային տրամադրության ստեղծում	19-րդ շաբաթ
«Մարտի 8»: Ի՞նչ	Մայրական սիրո և մոր դերի	20-րդ

Ամիս/ամսաթիվ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը
03.09.2021	Կազմակերպչական աշխատանքներ
10.09.2021	Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում
17.09.2021	ՀՀ անկախության օրը
24.09.2021	Պետական խորհրդանիշներ
01.10.2021	Քո առողջությունը. անձնական հիգիենա, օրվա ռեժիմ
08.10.2021	Առողջ ապրելակերպ
15.10.2021	«Իմ հույզերն ու զգացմունքները»
22.10.2021	«Ես էլ քեզ նման եմ» Հանդուրժող վարքի սկզբունքները
05.11.2021	«Քանի լեզու գիտես, այնքան մարդ ես»
12.11.2021	«Ի՞նչ ձեռքբերումներ ունեցա այս կիսամյակի ընթացում»
19.11.2021	«Ջուրը կյանք է»
26.11.2021	«Պետք է արդյոք խնայել»
03.12.2021	Քաղաքացիական ինքնություն
10.12.2021	«Ես սիրում եմ իմ գինվորին»
17.12.2021	«Ինչպե՞ս պատրաստվել երկրորդ կիսամյակին»
24.12.2021	«Ամանորին ընդառաջ»
14.01.2022	Ճանապարհային երթևեկություն
21.01.2022	Ստիպված եմ հարցնել
04.02.2022	Հայաստանի պատմամշակութային ժառանգությունը
11.02.2022	Հովհ. Թումանյանի հեքիաթները
18.02.2022	Զրույց «Մայրենիի օրը: Ինչպե՞ս սովորել գեղեցիկ խոսել»
25.02.2022	«Գարունն իմ հայրենիքում»
04.03.2022	«Մարտի 8»: Ի՞նչ նվիրել սիրելի մայրիկին
11.03.2022	Մայրության և գեղեցկության տոնը, տոնի խորհուրդը
18.03.2022	«Հայը և քրիստոնեությունը»: Սուրբ Զատիկ
01.04.2022	Աշխարհը հրաշալի է
08.04.2022	Աշխատասիրություն
15.04.2022	Եկեք բոլորս փորձենք այն, ինչը հնարավոր է
22.04.2022	«Ապրիլի 24»
29.04.2022	Եթե ես լինեի...
06.05.2022	Իմ ծննդավայրը: Իմ ընտանիքը
13.05.2022	Տարվա արդյունքների ամփոփում
20.05.2022	Պատրաստվում ենք էքսկուրսիային

ՄԿԱԳ տեղակալ՝ Ե. Քոլայան

Դասվար՝ Ն. Սեյրանյան

նվիրել սիրելի մայրիկին	կարևորության քննարկում:	շաբաթ
Հայաստանի պատմամշակութային ժառանգությունը	Նպաստել հայրենաճանաչության բարձրացմանը: Արժևորել անցյալի ձեռքբերումներն ու հաղթանակները:	21-րդ շաբաթ
Ստիպված եմ հարցնել	Խթանել ոչ ստանդարտ իրավիճակներում կողմնորոշվելու հմտությունները:	22-րդ շաբաթ
Մայրության և գեղեցկության տոնը, տոնի խորհուրդը	Մայրական սիրո և մոր դերի կարևորության քննարկում: Տոնի խորհրդի կարևորության իմացություն:	23-րդ շաբաթ
«Հայը և քրիստոնեությունը»: Սուրբ Զատիկ	Քննարկման միջոցով աշակերտների մոտ հիմնավորել եկեղեցու դերը հայ իրականության մեջ:	24-րդ շաբաթ
«Ապրիլի 24»	Հայ ժողովրդի պատմության իմացության ձևավորում	25-րդ շաբաթ
Աշխատասիրություն	Հարգանք աշխատանքի և աշխատող մարդու նկատմամբ	26-րդ շաբաթ
Եկեք բոլորս փորձենք այն, ինչը հնարավոր է	Կարևորել փոխօգնության և համագործակցության դերը մարդկանց կյանքում:	27-րդ շաբաթ
Աշխարհը հրաշալի է	Քննարկել շրջակա միջավայրի վրա ազդող տարատեսակ գործոնները և թե ինչպես կարելի է պահպանել շրջակա միջավայրը:	28-րդ շաբաթ
Եթե ես լինեի...	Հստակեցնել յուրաքանչյուր աշակերտի ցանկությունները:	29-րդ շաբաթ
Իմ ծննդավայրը: Իմ ընտանիքը	Հայրենասիրության սերմանում: Ընտանիքի կարևորության գիտակցում	30-րդ շաբաթ
Տարվա արդյունքների ամփոփում	Մտորել բացթողումների և ձեռքբերումների շուրջ:	31-րդ շաբաթ

ՄԿԱԳ տեղակալ՝ Ե. Քոլայան

Դասվար՝ Ն. Սեյրանյան